№ 127 Յուլիսի 23 (Օգոստոսի 4) 1880 Յուլիսի 23 (Օգոստոսի 4) № 127

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ.—Ներքին տեսութիւն. Կովկասեան համալսարան. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Վասպուրական. Թիւրքիա.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Հայոց ուսումնարանների նախագիծ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Թիւրքիան, ինչպէս հաղորդում են լրագիրները, տեսնելով որ եւրոպական պետութիւնները միաձայն են գործում արևելեան խնդրի վերաբերութեամբ, կամենում է այժմ այդ բոլոր պետութիւններից անջատել մի պետութիւն, այն է Գերմանիային: Նա դիմել է Գերմանիային, խնդրելով որ գերմանական կառավարութիւնը ուղարկի Կ. Պօլիս փորձված ֆինանսիստներին, Թիւրքիայի ֆինանսները կարգի բերելու համար և նոյնպէս զինուորական պաշտօնեաներին, զօրքը վերանորոգելու համար:

Գերմանիան համաձայնվել է այդ առաջարկութեան հետ և ուղարկել է մի ֆինանսական պաշտօնեայի, նոյնպէս թոյլ է տուել որ ցանկացողները գերմանացի զինուորականներից ուղևորվեն դէպի Թիւրքիա:

Բ. Դուռը, իր խելքով, դրանով կարծում է հասնել իր մտադրած նպատակին, կարծում է դրանով Գերմանիային եւրոպական պետութիւնների հետ ընդհանուր գործակցութենից անջատել կարողանալու:

Եւրոպական հասարակական կարծիքը և պարլամենտները ուշադրութիւն դարձրին Թիւրքիայի քաղաքականութեան այդ նոր փորձերի վրա: Անգլիական պարլամենտում այդ մասին հարցումներ եղան: Բայց Գլադստոնի մինիստրութիւնը հանգստացրեց հասարակական կարծիքը, յայտնելով, որ Գերմանիան իր մի քանի պաշտօնեաներ Թիւրքիա ուղարկելով, ամենևին չէ կամենում հեռանալ եւրոպական պետութիւնների ընդհանուր համաձայնութենից արևելեան խնդրի վերաբերութեամբ, բայց թոյլ է տալիս, ինչպէս և առաջվայ ժամանակները միշտ արել է, իր հպատակներին մտնել Թիւրքաց ծառայութիւնը:

Գերմանիան յայտնել է պաշտօնապէս, որ այն գերմանացի հպատակը, որ գերմանական արքունի ծառայութեան մէջ է գտնվում, երբ ուղևորվում է դէպի Թիւրքիա, պարտաւորված է լինում հրաժարական տալ իր ծառայութենից:

Այդ բոլորը ցոյց է տալիս որքան նեղ դրութեան մէջն է Թիւրքիան, որ այս տեսակ երեխայական միջոցներով կարծում է քանդել կարողանալու այն քաղաքական ներդաշնակութիւնը, որ տիրում է այժմ ամբողջ Եւրոպայում արևելեան խնդրի վերաբերութեամբ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«Голосъ» լրագրի բանասիրական բաժնի մէջ կարդում ենք հետևեալ յօդուածը Կովկասեան համալսարանի մասին:

Ներկայումս յաճախ խօսվում է Թիֆլիսի համալսարանի մասին: Եւ ճշմարիտ Սիբիրեան համալսարանից յետոյ կովկասեանը ամենաանհրաժեշտն է: Այնտեղ համալսարանը ոչ թէ միայն համապատասխան կը լինի բարձրագոյն ուսման պահանջներին, այլ մի և նոյն ժամանակ կովկասեան գիտական հարցերի ծագեցնելուն և մշակմանը կը ծառայի: Կովկասի մէջ չափազանց հարուստ նիւթեր կան ոչ թէ միայն բնագէտների, այլ և պատմաբանների և լեզուագէտների համար: Մեր յարգելի բնագէտ Կ. Ֆ. Կեսլէր, վերջացնելով կովկասեան իր ճանապարհորդութեան նկարագիրը երկրի բարձրագոյն ուսումնական հիմնարկութեան ցանկութեամբ, նկատում է, որ համալսարանը Կովկասի մէջ որքան կարելի է շուտ պէտք է հիմնել, որովհետև այնպիսի հարցեր կան, մանաւանդ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԻ ՆԱԽԱԳԻԾ

Մեր ամբողջ հայոց ազգը բաժանվում է երեք գլխաւոր դասակարգի, այսինքն երկրագործաց, արհեստաւորաց և վաճառականաց դասակարգերը: Այս երեք դասակարգերից առաջինը համարվում է ամենաբազմաթիւը և ամենաչքաւորը, իսկ միւս երկու դասակարգերը թեպէտ թւով աւելի քիչ են, բայց աւելի հարուստ: Առաջին դասակարգի պատկանողներն են մեր գիւղացիք, իսկ միւս երկու դասակարգերի պատկանողներն են մեր քաղաքացիք: Սորանից հետևացնում ենք, որ բոլոր մեր ուսումնարանների ուսանողներն և ուսանողուհիներն են գլխաւորապէս երկրագործաց, արհեստաւորաց և վաճառականաց զաւակներ: Այժմ տեսնենք հայ երկսեռ ուսանողները եթէ մեր այժմեան չորս կարգի ուսումնարանների պրօգրամայի համաձայն երբ և եթէ իրանց ուսումը աւարտեն և ուսումնարաններից դուրս գան, արդեօք նրանց ո՛ր դասակարգի համար պատրաստ կարող ենք համարել և կամ նոքա կարո՞ղ են կազմել երկրագործաց, արհեստաւորաց կամ վաճառականաց համար մի տեսակ թարմ ոյժ: Ըստ մեր դատման ոչ. որովհետև հայ ուսանողը մեր ուսումնարաններից ոչ մինի մէջ չէ սովորում ո՛չ երկրագործութիւն, ո՛չ արհեստ և ո՛չ էլ վաճառականութիւն: Եւ դորա համար չէ՞ միթէ որ մեր հայ ուսանողը շատ անգամ ստիպված թողնում է երկրագործաց, արհեստաւորաց և վաճառականաց դասակարգերը, որոնցից մինին անշուշտ ինքն էլ է պատկանում, և սկսում է որոնել ուրիշ դասակարգի մարդիկ և ուրիշ գործունէութեան ասպարէզներ, ինչպէս օրինակ ուսուցչութիւն, քահանայութիւն և երբեմն էլ ընտրում է աստիճանաւորաց ասպարէզը: Այս երեք դասակարգի մարդկանց խմբերի մէջ խառնվելով մեր հայ ուսանողը, բնականաբար խորթվում է իր ծնողաց տանից, նոցա գործունէութեան ասպարէզից: Ուրեմն, այսպիսով մեր ուսումնարանները նպաստում են բաժանելու հարազատ որդուն իր հօրից, հարազատ աղջկանը իր մօրից.... Այս կերպ բաժանվելով է, որ մեր երկրագործք, արհեստաւորք և վաճառականք հետզհետէ կարող են զրկվել իրանց միջի թարմ և զօրեղ ոյժերից այնչափ, որ նոյն իսկ ամեն մի դասակարգը կարող է հիմքից խախտվել, այսինքն ժողովրդի մէջ մտած արդիւնաբերական հոգին հետզհետէ թուլանալով կարող է միանգամայն անհետանալ: Մինչդեռ մեր ուսումնարանները ընդհակառակն պէտք է պատրաստէին մեծ մասամբ երկրագործներ, արհեստաւորներ և վաճառականներ, աւելի լաւ ասել, գործնական կեանքի յարմար մարդիկ: Եթէ այժմեանէ մեր ուսումնարաններում հայ երկսեռ մանկտին կրթվում է այնպէս, որ սա արհամարհանօք է նայում երկրագործի, արհեստաւորի և վաճառականի վրա իբրև կոպիտ, անտաշ և տգէտ մարդկանց վրա, ուրեմն մեր կորուստը, համարձակ կարող ենք ասել, շատ հեռու չէ:

Ցիրաւի, միթէ նպատակայարմար է, երբ մենք երկրագործի, արհեստաւորի և կամ վաճառականի մանչ ու աղջիկ զաւակներին տարիներով սովորեցնում ենք թէ փարիզը աշխարհիս ամենագեղեցիկ քաղաքն է, Կիւրոսը, Տիգրան I-ը, Նապօլէօն Բօնապարտը երևելի թագաւորներից են եղած. ի՞նչ սերտ յարաբերութիւն կարող է այս ամենը ունենալ այն ուսանողի ապագայ կեանքի հետ, որի գործունէութիւնը պէտք է լինեն երկրագործութեան, արհեստագիտութեան կամ վաճառականութեան ասպարէզները, որոնց մէջ հայ ուսանողին հարկաւոր է գիտենալ միայն թէ ո՛ր տեսակ հողը աւելի շատ քանակութեամբ և լաւ տեսակով արտադրութիւն, բերքեր կարող է ունենալ. յետոյ այս բերքերից ինչ տեսակ կեանքի յարմար և հարկաւոր արհեստական մթերքներ կարելի է պատրաստել և ի վերջոյ գիտենալ թէ երբ և ո՛ր տեսակ պատրաստի կամ անպատրաստի մթերքներ հարկաւոր է տեղափոխել մի քաղաքից միւս քաղաք, ուրիշ երկիրների հարստութիւնքը գրաւելու և ձեռք բերելու համար:

Այս բոլոր դժբաղդութիւնը, որ մի ամբողջ սերնդի համար առաջ է գալիս, գլխաւորապէս նորանից է, որ մեր ազգային հոգևոր ուսումնարանների պրօգրամայի կազմակերպութիւնը բոլորովին չէ յարմարեցրած մեր ազգի իսկական ուղղութեան և նորա էական կարիքներին: Բայց ո՞վ է կազմել այդ պրօգրամման. պատասխանը կարճ է —հայ ուսուցիչը, ընթերցող: Իսկ թէ ինչո՞ւ հայ ուսուցիչը այդպիսի պրօգրամմա է կազմել, լսիր հետևեալը, այն ատեն կը հասկանաս:

Մեզանից որին չէ պատահած լսել կամ կարդալ լրագիրների մէջ՝ թէ այս կամ այն ուսումնարանի ուսուցիչը հեռացել է և նրա տեղը ուրիշն է վարձվել. յետոյ այս վերջինն էլ, հազիւ մի տարի պաշտօն վարելուց վերջը նոյն վիճակի է հասել և այլն: Այսպէս հետզհետէ հայ ուսուցիչը մի ուսումնարանից միւս ուսումնարան ստէպ կամայ և ակամայ տեղափոխվելով, ի վերջոյ միանգամայն ընդ միշտ զզվում է դասատուի արուեստից և թողնելով մեր ուսումնարանը իր համար ուրիշ գործունէութեան ասպարէզ է ընտրում: Չէ՞ որ այս ատեն պարապ պաշտօն է մնում. բայց բաց թողած պաշտօնը ներկայումս կարո՞ղ է երկար ժամանակ պարապ մնալ, քանի որ մեզանում, ինչպէս ամենայն տեղ, սովալլուկների թիւը քիչ չէ, որոցմէ մինին քաղցը ստիպում է ընդունել հայ ուսուցչի պաշտօնը, որին ինքը դուցէ ոչ մի յարմարութիւն և արժանաւորութիւն չունի: Աւելի պարզեմ ասածս: Երբ մի ոք մեր ուսումնարաններում ուսուցչական ասպարիզում որ և է պաշտօն է ստանում, նա հաստատ մտքով և անխախտելի կամքով յանձն չէ առնում վարել այդ պաշտօնը. վասն զի հայ ուսուցիչը բնաւ երբէք նպատակ չէ դնում իր համար օգուտ քաղել իր պաշտօնից՝ ուսումնասիրել մանկավարժական գործը և հարստացնել իր հմտութիւնը դաստիարակութեան գործի մէջ, այլ նա ապրում է այն մտքով, որ մի ժամանակաւոր ապաստանարան ունենայ ուսումնարանի մէջ, իսկ յետոյ միջոց գտնէ ուրիշ գործունէութեան ասպարէզ, ուրիշ աւելի ապահով դրութիւն ճարել իր համար: Ուրեմն մեզանում ուսումնարանի մէջ գործողը—հայ ուսուցիչը—ունի այլ նպատակ՝ նպատակ արտաքոյ ուսումնարանի. իսկ արտաքոյ ուսումնարանի ապագայ փնտռող և նպատակ ունեցող հայ-ուսուցիչը երբէք չէ կարող ուսումնարանի բուն շահերի վրա լուրջ մտածել և ընդունակ լինել կազմել այլ պրօգրամա քան թէ այն, որով մեր ապագայ սերունդը օրըստօրէ անզգալի կերպով պիտի շեղվի մեր ազգի պատմական ուղղութենից: Ուրիշ բան կը լինէր եթէ հայ ուսուցչի նիւթական պայմանները այնպէս լինէին, որ ուսուցչական պաշտօնը յանձն առնելով, դասատուն վստահ լինէր որ 20—25 տարի դաստիարակողի ծանր պաշտօնը վարելով, իր ծերութեան ժամանակ նա չի մնայ առանց մի կտոր հացի, առանց հատոյցի իր մատուցած բազմամեայ ծառայութեան համար: Իսկ եթէ այսպէս լինէին դասատուի պայմանները, այն ժամանակ դասատուի ասպարէզը կը մտնէին այնպիսի ընդունակ մարդիկ, որոնց տուած ուղղութիւնը և պրօգրամման կը լինէր բոլորովին այլ, քան թէ հիմիկվանը: Բայց ցաւալին այս է, որ մեզանում ոչ ոք չէ մտածում, թէ ինչպէս կարելի է ապահովացնել հայ-ուսուցչի ներկան և ապագան, երբ նա գործել է անխոնջ 20—25 տարի: Այս ապերախտութիւն չէ՞ դէպի ազգային գործիչները, երբ այդ մասին ոչ մէկը չէ մտածում....

Բոլոր վերև խօսածներից գալիս ենք այն եզրակացութեան, որ մեր ուսումնարանների գոյութեան հիմքը կանգնած է երկու էական կէտերի վրա—տնտեսական և ուսումնական, որոնցից երկուսն էլ գտնվում են այնչափ խանգարված ու խախտւած դրութեան մէջ, որ ամենահարկաւոր է նրանց անյապաղ կազմակերպութիւնը, որի մասին ահա սկսում ենք:

Այն սկզբունքը, որից մենք առաջ կը գանք, կայանում է նորանում, որ բոլոր Ռուսաստանի մեր ազգային, հոգևոր ուսումնարանների տնտեսական և ուսումնական վարչութիւնը հարկաւոր է կենտրոնացնել այնպիսի մի հիմնարկութեան մէջ, որը լինելով օրէնսդիր և ուղեցոյց բոլոր ուսումնարաններին, կարող լինի ենթարկել մեր ուսումնարանները մի որոշ կանոնի և հաստատուն ընթացքի: Եւ այդպիսի հիմնարկութեան շնորհիւ